



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10633

658

7-39

57
p. 1038

150

2002

ԱՌԱՋՆՈՐԳ
ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Կ Ա Մ

ՏԱՐԵՐՔ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ

ՍԻՄՕՆ ԶԷՍՄԱԿԻՅԱՆ

Թղթակից-Ուսանող Բարիզի Առեւտրական

գործնական վարժարանին

(Ecole Pratique de commerce de Paris)

Ծ Ր Ա Գ Ի Ր

Գատնութիւն վաճառականութեան եւ ուսումնասիրութիւնը վաճառականութեան ամէն ճիւղերու վրայ. — Առեւտրական Օրէնսգիտութիւն, Աշխարհագրութիւն, Տնտեսագիտութիւն. — Վաճառագիտութիւն. — Թղթակցութիւն Հայ. Տանկ. Գաղ. եւ Անգլ. լեզուներով. — Արհեստից եւ արհեստական նոր զիւտերու վրայ ծանօթութիւններ. — Առեւտրական սակարանական եւ վանքայի հաշիւներ եւ այլն.



Հասոք Բ. — Տեսք Բ.



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ.ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1901

ՄԱՐԿԱԿ
ՔԱՆՈՒՄ

ՄԱՐԿԱԿ
ՔԱՆՈՒՄ

ՄԱՐԿԱԿ
ՔԱՆՈՒՄ

ՄԱՐԿԱԿ
ՔԱՆՈՒՄ

ՄԱՐԿԱԿ
ՔԱՆՈՒՄ

ՄԱՐԿԱԿ
ՔԱՆՈՒՄ

ՄԱՐԿԱԿ
ՔԱՆՈՒՄ



ՄԱՐԿԱԿ
ՔԱՆՈՒՄ

1881

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ա Կ Ա Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Դ Ա Ս Ը Ն Թ Ա Յ Ք

Առեւտրական եւ շահարարութեան Օրէնսդրութեան

Յնում վաճառման համար. — Վաճառականական գործերու ամէնէն պարզ եղանակն է այն գործողութիւն որով ուտեստ կամ ապրանք կը գնուի ծախելու և շահ մը ընելու նպատակով: Այսպէս, փոքրաքանակ վաճառականը մեծաքանակ վաճառականէն ապրանքներ կը գնէ ո՛ր և է գինով և յետոյ մաս մաս կը ծախէ սպառողներուն, առած գինէն աւելի գինով մը: Գործողութիւնը միշտ միեւնոյն կարագիւրըն ունի եթէ գնողն իրեն յանձնուած վիճակին մէջ ծախէ ապրանքը, կամ անոր վրայ աշխատելէն, այսինքն անոր բնութիւնը կամ ձեւը փոխելէն ետքը միայն ծախէ, Արդարեւ, երկու պարագային մէջ ալ գնողին դիտարութիւնն է ծախել և շահ մը ընել: Առեւտրական գործ մը կատարած կ'ըլլայ նաեւ ա՛ն որ ապրանքներ կը գնէ ո՛չ թէ ծախելու այլ վարձու տալու համար: Ուստի ա՛յն որ կառքեր կը գնէ հասարակութեան վարձու տալու համար կամ գիրք կը գնէ հանրային ընթերցարան մը բանալու համար, առեւտրական գործ մը կատարած կ'ըլլայ, այսինքն կը գնէ շահ մը ընելու նպատակաւ ո՛չ թէ գնած առարկաներուն վաճառումն այլ անոնց վարձու տրուելէն: Ընդհակառակն առեւտրական գործ չի նկատուիր երբ կալուածատէր մը, հողագործ մը կամ այգեգործ մը իր մշակած հողին արդիւնքը, ինչպէս ցորեն, գինի, պտուղ ևն. ծախէ, նմանապէս, ա՛յն որ իր անձնական գործածութեան համար բան մը, զոր օրինակ, կառք մը կը գնէ և ժամանակէ մը ետք կը ծախէ կա՛մ ուրիշ մը գնելու համար և կամ որովհետեւ ա՛լ պէտք չունի անոր, առեւտրական գործ մը կատարած չըլլար, վասնզի այդ կառքն իր պէտքին գործածելու համար գնած է և ո՛չ թէ զայն ծախելով շահ մը ընելու մասնաւոր նպատակաւ:

Տարագագործ կամ գործարանատէր կ'ըսուի անոր որ գործաւորներու կամ մեքենաներու միջոցաւ կ'այլափոխէ նախանիւթ մը, որ այսպէս աւելի մեծ արժէք մը կ'ստանայ: Օրինակի համար բուրդը կամ բամբակը կ'առնէ ու կերպաս կը շինէ, կամ երկաթը կ'առնէ ու մեքենաներ կամ ուրիշ գործիքներ կը շինէ: Գործարանատէրը շատ անգամ նախանիւթն ինք կը գնէ, կը ձեւափոխէ և յետոյ կը ծախէ: Ասով վաճառականական գործ մը ըրած կ'ըլլայ, որովհետեւ կը գնէ ծախելու համար: Բայց երբեմն կը պատահի որ վաճառական մը խամ բուրդ կուտայ գործարանատէրին որպէսզի կերպաս շինէ իրեն համար: Այս պարագային մէջ ալ գործարանատէրը վաճառականական գործ մը ըրած կ'ըլլայ, որովհետեւ իրաւ է թէ բուրդն ինք չգնեց, բայց իր մեքենաներուն և գործաւորներուն միջոցաւ կերպաս շինեց եւ ասոր փոխարէն շահ մը առաւ:

Յանձնակատարութիւն եւ միջնորդութիւն. — Բացատրենք թէ ի՞նչ է յանձնակատարութիւնն և ի՞նչ է միջնորդութիւնը: Վաճառականները շատ անգամ չեն կրնար իրարու հետ յարաբերութեան մտնել, որովհետեւ կա՛մ իրարմէ հեռու են կամ զիրար չեն ճանչնար: Արդ, այս յարաբերութիւնք կը հաստատուին ուրիշներու ձեռքով, որք վաճառականութեան անհրաժեշտ օժանդակներն են: Ասոնք կը կոչուին յանձնակատար և միջնորդ: Յանձնակատարը միայն երկու կողմերն յարաբերութեան մէջ դնելով չի բաւականանար, այլ անձնապէս կը մտնէ գործին մէջ: Եթէ յանձնառած է ծախել, անձնապէս պարտաւոր է ապրանքն յանձնել, իսկ եթէ յանձնառու եղած է գնել, պարտաւոր է ապրանքին գինը վճարել: Գործողութիւնն աւարտելէն ետք, յանձնակատարը հաշիւի կը նստի անո՛ր հետ որուն համար գործեց, և կը յանձնէ գումարը կամ ապրանքը զոր առաւ անոր հաշուոյն, կամ կը գանձէ դրամը զոր վճարեց անոր հաշուոյն: Այս աշխատութեան փոխարէն վարձք մը կ'առնէ որ կը կոչուի յանձնարարողչէք: Միջնորդը յանձնակատարէն կը տարբերի, որովհետեւ միայն երկու կողմերն իրարու կը մօտեցնէ և անոնց սակարկութեան պայմանները

կը զիւրացնէ: Սակարկութիւնը լմննալէ ետք, իր դերը կ'աւարտի: Բանակցութեան հետեւանքներուն պատասխանատու չէ: Միջնորդն ալ, յանձնակատարին պէս, վարձք մը կ'առնէ, որ կը կոչուի միջնորդչէք: Յանձնակատարներուն կամ միջնորդներուն գործողութիւնները վաճառականական գործեր են:

Փոխադրող եւ հայրայրիչ. — Փոխադրութեան յանձնառուք վաճառականութեան գլխաւոր գործիչներուն կարգին մէջ են: Ասոնք յանձն կ'առնեն ապրանքները կամ մարդերը տեղէ մը ուրիշ տեղ փոխադրել: Փոխադրութեան յանձնառուներուն ըրածը վաճառականական գործ է, վասն զի փոխադրութեան միջոցները կը շահագործեն, թէ՛ ծովու եւ թէ՛ ցամաքի վրայ: Փոխադրութեան միջոցներն են ձի, ջորի, կառք, շոգեկառք, շոգենաւ եւն: Հայթայթիչ կը կոչուի այն անձը, որ յանձնառու կ'ըլլայ ժամանակի մը համար եւ որոշեալ գնով հայթայթել ու տեստեղէններ կամ ուրիշ առարկաներ: Այսպէս, այն որ յանձնառու կ'ըլլայ հանրային հաստատութեան մը տարեկան սպառման պէտք եղած անհրաժեշտ նիւթերը տալ, ինչպէս փայտ, իւղ եւն., հայթայթիչ կը կոչուի: Ամէնէն կարեւոր գործառնութիւնները կ'ընեն այն հայթայթիչները որք կառավարութեան հետ կը պայմանագրուին բանակին կամ նաւատորմին պէտքերն հոգալու համար:

Փոխանակագիր — Փոխանակութեան եւ պանքայի գործողութիւններ. — Վաճառականական գործերու մէջ կը դասակարգուին նաեւ փոխանակագիրներն և փոխանակութեան ու պանքայի գործողութիւնները: Ետքը մանրամասնօրէն պիտի բացատրենք թէ ի՞նչ է փոխանակագիրը, ի՞նչ ձեւերու ենթարկուած է եւ ի՞նչ հետեւութիւններ կ'ունենայ: Հիմակուհիմա ըսենք միայն թէ փոխանակագիրը մասնաւոր ձեւով խմբագրուած գրութիւն մ'է, որ ուրիշ տեղ գտնուող մէկու մը դրամ վճարելու յանձնառութիւնը կը պարունակէ: Պանքայի գործողութիւններն են մասնաւորներու դրամն իբր աւանդ ընդունիլ, որոշեալ վարձքի մը փոխարէն գեղչել, այսինքն պայմանաժամէն առաջ վճարել փոխանակագրեր կամ մուրհակներ, վարկ բանալ, փոխատուութիւնը

նել են . Լն . : Փոխանակութիւն կ'ըսուի դրամի մը տեղ ուրիշ տարբեր դրամ տալու գործողութեան , օրինակի համար ֆրանսականին տեղ անգլիական կամ ռուսականին տեղ օսմանեան են . : Փոխանակութեան գործողութիւնք վաճառականական գործ կ'ըլլան ա'յն ատեն միայն եթէ անոնցմէ շահ մը հանելու նպատակաւ կը կատարուին , ինչպէս կ'ընեն սեղանաւորները : Ա'յն որ բարեկամի մը պանքտոմսը կ'առնէ և տեղը ոսկեղրամ կամ արծաթ դրամ կուտայ , վաճառականական գործ մը ըրած չի համարուիր :

Ուրիշ վաճառականական գործեր .— Ա'յն որ գրասենեակ մը բանալով առեւտրական գործակալութիւն մը կը հաստատէ և վարձքի մը փոխարէն իր յաճախորդներուն գործերը կը տեսնէ , անոնց գանձումները կը կատարէ , անոնց դրամը շահու կը դնէ , անոնց մէկ անշարժ կալուածը կամ ապրանքը ծախելու համար յաճախորդ կը գտնէ , վաճառականական գործ մը ըրած կ'ըլլայ : Վաճառականական գործ ընող կը նկատուին նաեւ ծովային կամ գետային նաւարկութեան յատկացած նաւեր շինողները , ծախողները , կամ վարձու տուողները , ծովային ապահովագրական ընկերութիւնները , թատրոն բանեցնողները , նուագահանդէս կազմակերպողները ևն . ևն . :

ՊԱՆԻՐԻ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Իճալիս պանիրի միջազգային վաճառականութեան մէջ կարեւոր տեղ մը կը բռնէ : Վաճառած պանիրներն են Քարմեկան , գլանածեւ , 15 քիլօնոց , քիլօն 1 , 50էն 2,70 ֆր . , ըստ տեսակի : Ա'յս պանիրը որքան ծանր ըլլայ այնքան յարգի է : Քորկօնգօլա , ճերմակ և կանաչ : Ա'յս պանիր ձմեռը միայն կրնայ արտածուիլ , վասնզի տաքութենէն շուտով կ'աւրուի : Նաբոլիական Քաօֆալալը թէ' տեսքով

թէ համով կը տարբերի Քաօեռէն : Ռօմանօ , ինչպէս անունէն ալ յայտնի է , կը շինուի Հոտմի շրջակաները : Չոր է և ընդհանրապէս մաքառօճի վրայ կ'անցուի : Բեֆօրիօ կը շինուի Թօսքանայի մէջ ոչխարի կաթէ և Պիպեղի պսնիքը' Սիկիլիոյ մէջ : Իտալիա տարին կը ներածէ 80,000 կենդիննար և կ'արտածէ 70,000 : Մաքսատուրքն է 25 ֆր . առ մէն մի կենդինար :

Անգլիա մի միայն կ'արտածէ Չէսդըր ըսուած պանիրը , 25-30 քիլօնոց խոշոր կաղապարներով : Գլխաւորապէս կ'ըսպառի անգլիական գաղթավայրերու մէջ , Գ'արտածուին նաև քանատական պանիրներ , ի մէջ այլոց , Սդիլդըն , թիթեղեայ տուփերու մէջ , Սդիլդըն , իր կապոյտ գոյնով , իր տեսքով և համով , քիչ մը կը նմանի Ռօքֆորի : Միջերկրականի անգլիական գաղթավայրերէն ալ մասնաւոր պանիրներ կ'արտածուին , ինչպէս Մալդա կղզիէն : Կիպրոս կ'արտածէ կոթր պանիրներ , որք շատ գնահատուած են : Անգլիա տարին կը ներածէ 113,000 կենդինար պանիր և կ'արտածէ 5000 կենդինար : Անգլիոյ մէջ պանիրէն մաքս չառնուիր :

Յրանսա կ'արտածէ մանաւանդ Կրիւյէրի նմանող պանիրներ , գլանածեւ , 50-60 քիլօնոց , 100 քիլօն 150 ֆր . , բայց բուն Կրիւյէրը , որ Էմմէնդալէն կ'եղնէ , 160-180 ֆր . կ'արժէ : Ա'յս պանիրին սպառումը մեծապէս կը նուազի տաք եղանակներուն : Յրանսա կ'արտածէ նաև Ռօքֆօր , որ երեք տեսակ է : Մարսիլիա , մանաւանդ ձմեռը , կ'արտածէ զանազան պանիրներ , ինչպէս Մօն Տօն , Սէն Մարսըլէն , Մալաքօֆ , Պօնտօն ևն . : Պէտք է յիշել նաև Սալուայի պանիրները որք շատ գնահատուած են Արեւելքի մէջ : Վերջերս փորձեր եղան Եգիպտոս մտցնելու համար նորմանտական պանիրներ , ինչպէս Քամէմպէր , Լիվաոօ , Պուի , Քուլօմիէ ևն . բայց այս սպրանքներ , Աղեքսանդրիա հասնելուն այնպիսի վիճակի մը ենթարկուեցան որ հարկ եղաւ ծովը թափել : Յրանսա Կրիւյէրի 100 քիլօնէն 12 և ուրիշ պանիրներէն 15 ֆր . մաքսատուրք կ'առնէ :

Չուիցերիա Մարսիլիոյ , Հալրի , Անվէրսի , Դրիէսդէի , Վենետիկի և ձենովայի ճամբաներով կ'արտածէ իր Կրիւ-

յերներն ու էմէնդալները : Տարեկան ներածում 17,800 կենդինար 2 միլիոն ֆր. արժէքով և արտածում 238,000 կենդինար , 38 միլիոն ֆր. արժէքով : Մաքսատուրք 4 ֆրանք :

Գերմանիա կ'արտածէ իր ժէրոմէներն ու Միւնսդէրները որք Պաւերիայի և Լիւքսէմպուրկի մէջ կը շինուին : Տարեկան ներածում 100,000 կենդինար եւ արտածում 18,000 : Մաքսատուրք պայմանադրական սակացոյց 18,75 ֆրանք :

Հոլանտա կ'արտածէ Հոլանտ ըսուած պանիրները , որք երկու տեսակ են , մին գնտակի ձեւ ունի եւ կարմիր է ու 12 հատը մէկ սնտուկի մէջ կը դրուի : Միւսը տափակ և դեղնադոյն է եւ չորս հատը մէկ սնտուկի մէջ կը դրուի : Արտածում 420,000 կենդինար եւ ներածում 2000 : Մաքսատուրք 10,50 ֆրանք :

Ռուսիա արեւելեան հրապարակներուն կը ծախէ Հոլանտ ըսուած պանիրին նմանութիւնները , շատ ածան բայց քիչ գնահատուած : Պանիրի ճարտարարուեստը Ռուսիոյ մէջ մեծ թռիչ առած է , բայց առ մէն մի կենդինար 146,51 ֆր .ի մաքսատուրքը մեծ արգելք եղած է արտաքին վաճառականութեան : Ֆրանսա 131,86ի նպաստաւոր սակագինը կը վայելէ : Արտածում 6000 եւ ներածում 9000 կենդինար :

Մ. Նահանգներու մէջ , մանաւանդ ի Վիսքոնսէն , շատ զարգացած է տեսակ մը իւզոտ պանիրի շինութիւնը , Չէսդըրի եւ Կրիւյէրի նմանութիւն : Ներածում 48,600 կենդինար եւ արտածում 160,000 :

Պելժիոյ մէջ մաքսատուրքն է 12 ֆր. առ մէն մի կենդինար , իսկ ճերմակ ու ածան պանիրներէն մաքսատուրք չառնուիր : Ներածում 65,800 կենդինար եւ արտածում 800 կենդինար :

Աւստրիա կը ներածէ 30,000 կենդինար և կ'արտածէ 20 հազար : Մաքսատուրք 50 ֆր. առ մէն մի կենդինար :

- Ռումանիա. — Ներ . 180,000 քիլօ և արտ . 700,000 քիլօ
- Պուլկարիա. — « 25,500 « « 1,455,000 «
- Յունաստան . — « 50,000 « « 240,000 «

ՏՈՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Տեսր Զանազանաց (Յօդ . 5). — Տիրար Յովհաննէս Գրիգորեան աւանդի հաշիւ մը ունի Քրէտի Լիօնէի մէջ , որմէ 10,000 զրշ .ի փոխանցում մը կ'ընէ ի հաշիւ ընկերութեան , Քրէտի Լիօնէն 10,000 զրշ .ը Տիրար Յովհաննէս Գրիգորեանի պահանջէն կ'անցընէ Գրիգորեան եղբարց պահանջքին : Այս 10,000 զրուշը պանքան կը պարտի մեզ , ուստի Քրէտի Լիօնէն պարտական կ'ընենք և Տիրար Յովհաննէս Գրիգորեանը՝ պահանջող , քանի որ 10,000 զրշ .ը վճարած եղաւ :

Յօդ . 7 . — Տիրար Յովհաննէս Գրիգորեան 25 , 000 զրշի բաժինն ամբողջացնելու համար վճարեց 3653 զրշ : Մասնաւոր բան մը չկայ : 4րդ յօդուածին պէս գործողութիւն մ'է :

Եւ սնտուկի տեսակի (Յօդ . 8). — Սնտուկին մէջ 10,000 զրշ ունինք : Անօգուտ է այդչափ ստակ պահել : Ուստի 8500 զրշ .ը Քրէտի Լիօնէին կուտանք ընթացիկ հաշուով : Այս վճարումը պիտի անցնի Սնտուկի տետրակին եւքին կողմը՝ այսպէս . —

Ս Ն Տ Ո Ւ Կ

Եւք

Օր . 4	1 ————— 1 Հոկտ . 1901 —————			
	Քրէտի Լիօնէ			
	Մեր վճարումը ընթացիկ հաշուով			8500

Մեր հաւուրեցացիք բացման պայմանները . — Երբ պանքէն մը հաշուընթաց կը բանայ յաճախորդի մը , իր պայմանները պարունակող նամակ մը կը դրկէ անոր : Մեր պայմաններն ասոնք են . — տոկոս պարտական հաշուոյն (ի նըպաստ պանքէոին) Պանքայի դրամազեղչէն (առնուազն 4 1/2 0/0) 1 0/0 աւելի : Տոկոս պահանջող հաշուոյն (ի նպաստ մեզ) Պանքայի տոկոսէն (առ առաւելն 1 0/0) 1 0/0 աւելի : Քրէտի Լիօնէին պիտի տանք մինչեւ 10 հազար զրշ : Յանձնարարողչէք 1/4 եւ 1/20 0/0 :

Չեքի տեսակ . (Յօդ . 9). — Մեր կամ ուրիշ անձերու

հրամանին չէք քաշել կարենալու համար Քրէտի Լիօնէն մեզ տուաւ 50 չէքնոց տետրակ մը որուն համար կը պարտինք 20 դր:

Վանառում. (Յօդ. 10).— Տ. Խաչատուր Ղուկասեանի տրուած հաշուեցոյցը ընդօրինակութեան տետրի մը մէջ կ'առնուի և յետոյ ձեռքով կը գրուի վաճառման տետրին մէջ:

Տ Ե Տ Ր Վ Ա Ճ Ա Ռ Մ Ա Ն

Օր.	1	1 Հոկտ. 1901			
3		Տ. Խաչատուր Ղուկասեանէ			
	20	Մրար կերպասեղէն 572 մ. à 5	2860		
		Զեղչ 15 %	429		
		Արժէք 2 Յնվ. 902	2431	2431	
	2	Նոյն			

Արժեք. — « Արժէք այս ինչ թուականին » ըսելը կը նշանակէ վճարման օրը, եթէ խնդիրը հաշուեցոյցի վրայ է, կամ տոկոսի համար իբր մեկնակէտ ծառայող օրը, եթէ ընթացիկ հաշիւի վրայ է:

Ծախս ապրանսաց վրայ. (Յօդ. 11).— Այս ծախքերը Ընդհանուր Ծախքի մաս չեն կազմեր և հետեւապէս չենք կրնար Ընդհանուր Ծախքի հաշուոյն տանիլ: Այդ ծախքերը ապրանքներուն յատուկ են: Կրնանք Ընդհանուր Ապրանքին հաշուոյն անցընել, բայց աւելի աղէկ է մասնաւոր հաշիւ մը բանալ: Եթէ ծախքերը գատ չգրուին, միւս գործողութիւններուն հետ կը խառնուին և ուշադրութիւն չեն գրաւեր, մինչ գատ գրուելով ուշադիր հսկողութեան առարկայ կ'ըլլան միշտ: Սոյն հաշիւը պարտական պիտի ընենք վաճառատան կողմէ վճարուած գանազան ծախքերու համար, ինչպէս փոխադրութիւն, պատատում եւն: Եթէ այս կարգի ծախքերը յաճախորդին վրայ են, այն ատեն յաճախորդը պարտական կ'ընենք և « Ծախք ապրանսաց վրայ » հաշիւը պահանջող:

2. — Քեօրանեայի սաննագ

- 1. — Քէօթահիա 4 գիւղախումբ
- 2. — Էսկիչէհիբ 1 » 169 գիւղ
- 3. — Կէտոս 1 » 87 »
- 4. — Սիմալ 1 » 123 »
- 5. — Ուշագ 2 » 153 »

3. — Էրբողուլի սաննագ (Կեդրոն Պիլեհիկ)

- 1. — Սէօյիւտ 3 գիւղախումբ 85 գիւղ
- 2. — Իյնէկէօլ 2 » 122 »
- 3. — Եէնիչէհիբ 1 » 112 »

4. — Գարահիսար Սահիպի սաննագ (ԱՅիոն Գարահիսար)

- 1. — Սանաբլը 3 գիւղախումբ 247 գիւղ
- 2. — Պօլվատին 1 » 38 »
- 3. — Ազիգիէ 1 » 70 »

5. — Գարասիի սաննագ (Կեդրոն Պալլեսիւր 6 գիւղիս)

- 1. — Այվալըք 1 գիւղ
- 2. — Պիւրհանիէ 10 » Քէմէր Էտրէմիտ ևն.
- 3. — Էտրէմիտ 2 գիւղախումբ 164 գիւղ
- 4. — Էրտէկ 3 » (Գարու-Տաղը ևն.) 27 »
- 5. — Պանտրմա 2 » (Էտինճիք, Մանիաս) 102 »
- 6. — Կէօնէն 76 գիւղ
- 7. — Պիղատըճ 52 »
- 8. — Սունտըրը 52 »

Գ. — Գ Օ Ն Ի Ա

Բնակիչ 1,500,000: Տարածութիւն 91,640 քառ. քիւմ. մէդր: Ունի 4 սաննագ, 25 փաղա, 33 նահիյէ, 1939 գիւղ:

1. — Գօնիայի սաննագ

1. — Գօնիա	4 գիւղախումբ	86 գիւղ
2. — Աքչէհիր	2 »	90 »
3. — Պէյլէհիր	1 »	76 »
4. — Սէյտի շէհիր		43 »
5. — Ըլղըն	1 »	43 »
6. — Պօղբըր	1 »	79 »
7. — Գարաման կամ Լարէնտէ	2 գիւղխումբ	84 գիւղ
8. — Սատըմ	—	18 գիւղ
9. — Էրէյլի	1 գիւղխումբ	62 »
10. — Գարարունար	—	33 »
11. — Գօշհիսար	—	80 »

2. — Նիյսեի սաննագ

1. — Նիյտէ	2 գիւղխումբ	91 գիւղ
2. — Նէվշէհիր	— »	34 »
3. — Իւրկիւպ	— »	28 »
4. — Աքսէրայ	— »	160 »
5. — Պօր	— »	2 »
6. — Մատէն կամ Համիտիէ	— »	43 »
7. — Արապսոն	— »	14 »

3. — Պօրսուրի սաննագ

1. — Պօրսուր	1 գիւղախումբ	163 գիւղ
2. — Թէֆէննի	1 »	33 »

4. — Սպարթայի կամ Համիսպասի սաննագ

1. — Սպարթա	1 գիւղախումբ	163 գիւղ
2. — Օլուպօրլու	1 »	11 »
3. — Էհիրաիր	2 »	45 »
4. — Գարաաղաճ	1 »	46 »
5. — Եալօվաչ	1 »	36 »

Դ. — Ա Յ Տ Ը Ն

Բնակիչ 1,350,000: Տարածութիւն 45,000 քառ. թիւ-
մէդր: Ունի 5 սաննագ, 40 քաղա, 50 նահիյի, 2787 գիւղ:

1. — Իզմիրի սաննագ

1. — Իզմիր	5 գիւղախումբ	140 գիւղ
2. — Գուշատա	1 » (Այասուլուք)	28 »
3. — Չէշմէ	2 »	13 »
4. — Թիբէ	—	76 »
5. — Էօտէմիշ	3 »	141 »
6. — Ուրլա	— »	21 »
7. — Ֆօշնին	1 »	8 »
8. — Պայանտըր	— »	44 »
9. — Մէնէմէն	— »	45 »
10. — Սիվրի Հիսար	1 »	13 »
11. — Պէրկամա	7 »	173 »

2. — Մանիսայի կամ Սարուխանի սաննագ

1. — Մանիսա	3 գիւղախումբ	196 գիւղ
2. — Գասապա	2 »	33 »
3. — Ալաշէհիր	1 »	66 »
4. — Քուլա	2 »	98 »
5. — Աքհիսար	1 »	60 »
6. — Սալիհլի	1 »	86 »
7. — Կէօրտէս	1 »	135 »
8. — Թիմուրճը	— »	128 »
9. — Ասմա	1 »	36 »
10. — Քրքաղաճ	1 »	23 »
11. — Սօմա	— »	82 »

3. — Այսրնի սաննագ

1. — Այսրն	4 գիւղախումբ	148 »
2. — Նազիլի	3 »	74 »

3. — Պողտաղան	1	գիւղախումբ	53	գիւղ
4. — Սէօքէ	—	»	54	»
5. — Չինէ	—	»	92	»
6. — Գարաճասու	—	»	19	»

4. — Մենքեհի սաննագ

1. — Մէնթէչէ	2	գիւղախումբ	55	գիւղ
2. — Միլաս	—	»	95	»
3. — Մաքրի	1	»	81	»
4. — Մէրմէրիս	1	»	23	»
5. — Պօտուրում	—	»	29	»
6. — Քէօյճէ	—	»	66	»

5. — Տեհիզի սաննագ

1. — Տէնիզի	1	գիւղախումբ	123	գիւղ
2. — Տալաս	—	»		
3. — Պուլատան	1	»	42	»
4. — Մարաքի	1	»	38	»
5. — Չալ	1	»	63	»
6. — Ղարալի գարաաղաճ	1	»	87	»

Ե. — ՏՐԱՊԶՈՆ

Բնակիչ 1,050,000 : Տարածութիւն 31,300 քառ. քիլօ-մէտր : Ունի 4 սաննագ, 23 Բալա, 24 նահիլե, 2733 գիւղ :

1. — Տրապզոնի սաննագ

1. — Տրապզոն	4	գիւղախումբ	172	գիւղ
2. — Օրտու	5	»	237	»
3. — Կիրասոն	2	»	138	»
4. — Թիրէպուլի	—		114	»

5. — Կէօրէլի			56	գիւղ
6. — Վաքըֆը Քէպիր			55	»
7. — Սիւրմէնէ			69	»
8. — Աքճէապատ			82	»
9. — Օֆ				

2. — Ճանիկի սաննագ (Սամսոն)

1. — Ճանիկ	1	գիւղախումբ	183	գիւղ
2. — Պաֆրա	1	»	161	»
3. — Իւնիա	1	»	117	»
4. — Ֆաթսա			84	»
5. — Չարչամպա			261	»
6. — Չէրմէ			185	»

3. — Բիզեի սաննագ (Լազիսան)

1. — Ադինա	2	գիւղախումբ	102	գիւղ
2. — Խօբա	2	»	144	»
3. — Բիզէ	3	»	218	»

4. — Կիւմիլիսանի սաննագ

1. — Կիւմիլիսանէ	3	գիւղախումբ	99	գիւղ
2. — Քէլէսկին	—	»	85	»
3. — Շիրան	—	»	82	»
4. — Թուզուլ	1	»	94	»

Զ. — ՇԱԼԷՊ

Բնակիչ 100,000 : Տարածութիւն 78,600 քառ. քիլօմէտր : Ունի 3 սաննագ, 21 Բալա, 45 նահիլե, 3476 գիւղ :

1. — Շալեպի սաննագ

1. — Այնթապ	8	գիւղախումբ	202	գիւղ
2. — Քիլիս	7	»	460	»

3. — Պէյլան	—	գիւղախումբ	48	գիւղ
4. — Իսկէնտէրուն	1	»	24	»
5. — Անթաքիյէ	4	»	175	«
6. — Հարէմ	1	»	131	»
7. — Ճիսրի շուղուր	2	»	101	»
8. — Իտլիպ	3	»	121	»
9. — Մարա	—	»	35	»
10. — Պապը ճիպուլ	3	»	182	»
11. — Մէնպէճ	—	»	63	»
12. — Ճէպէլը սամաան	—	»	113	»
13. — Ռաքա	—	»	167	»

2. — Ուրֆայի սաննագ

1. — Ուրֆա	4	գիւղախումբ	404	գիւղ
2. — Բում քալէ	—	»	271	»
3. — Սուրուճ	—	»	360	»
4. — Պիրէճիք	—	»	135	»

3. — Մարաշի սաննագ

1. — Էլպիստան	7	գիւղախումբ	114	գիւղ
2. — Չէյթուն	—	»	28	»
3. — Բազարճըք	—	»	76	»
4. — Էնտէրին	1	»	81	»

Է. — ԷՆԿԻՒՐԻ

Բնակիչ 350,000 : Տարածութիւն 78,600 քառ. քիլոմէտր :
Ունի 5 սաննագ, 26 քաղա, 18 նահիյէ, 2765 գիւղ :

1. — Էնկիւրի սաննագ

1. — Էնկիւրի	—	գիւղախումբ	43	գիւղ
2. — Այաչ	1	»	41	»
3. — Պէյբազար	1	»	46	»

4. — Սիվրիհիսար	1	գիւղախումբ	76	գիւղ
5. — Զիպուքապատ	—	»	81	»
6. — Նալլը խան	—	»	58	»
7. — Հայմանա	1	»	146	»
8. — Նապանապատ	1	»	175	»
9. — Միխալըճճըք	—	»	58	»
10. — Զիտ (Սթանոս)	—	»	92	»
11. — Պալիա	1	»	81	»
12. — Քալէճիք	1	»	134	»

2. — Գրեքեհիւի սաննագ

1. — Գրըչէճիք	—	գիւխումբ	158	գիւղ
2. — Քէսկին (Տէնէք մատէն)	1	»	189	»
3. — Մէճիտիէ	—	»	70	»
4. — Ավանոս	—	»	56	»

3. — Զորումի սաննագ

1. — Զորում	1	գիւղախումբ	282	գիւղ
2. — Օսմանճըք	1	»	89	»
3. — Սուկուրլու	—	»	104	»
4. — Իւսկիւլիւպ	—	»	116	»

4. — Գայսերիի սաննագ

1. — Գայսերի	—	գիւղախումբ	102	գիւղ
2. — Տէվէլի	1	»	57	»
3. — Ինճէսու	1	»	22	»

5. — Եօզլուսի սաննագ

1. — Եօզլուս	2	գիւղախումբ	227	գիւղ
2. — Մատէն	—	»	165	»
3. — Պօղազլիյան	1	»	113	»

Ը. — Գ Ա Ս Թ Է Մ Ո Ւ Ն Ի

Բնակիչ 950,000; Տարածութիւն 50,000 քառ. քիլոմէ-
 քեր: Ունի 4 սաննագ, 21 ֆազա, 27 նահիյէ, 3712 գիւղ:

1. Գասքիւնների սաննագ

1. — Գասքիւնների	4	գիւղախումբ	237	գիւղ
2. — Ինէպօլու	2	»	268	»
3. — Չաֆրանպօլու	3	»	243	»
4. — Թաշքէօրբիւ	1	»	163	»
5. — Թաթար	1	»	147	»
6. — Ճիաէ	1	»	163	»
7. — Թօսիա	—	»	45	»
8. — Արած	2	»	170	»

2. — Պօլուի սաննագ

1. — Պօլու	—	գիւղախումբ	190	գիւղ
2. — Էրէյլի	—	»	148	»
3. — Պարթըն	1	»	215	»
4. — Կէրաէ	1	»	173	»
5. — Կէօնիւք	—	»	78	»
6. — Տիւզճէ	1	»	167	»
7. — Համիաիէ	1	»	173	»
8. — Մուտուրնու	—	»	142	»

3. — Չանդըրի սաննագ

1. — Չանդըրը	3	գիւղախումբ	208	գիւղ
2. — Չէրքէշ	3	»	208	»

4. — Սինօպի սաննագ

1. — Սինօպ	1	գիւղախումբ	144	գիւղ
2. — Պօյապատ	1	»	211	»
3. — Այանճըք	1	»	131	»

Օ Ր Հ Ա Շ Ի Ի

Գրիգորեան Եղբարց

5	1	Հոկտ. 1901		
20	2	Քրէտի Լիօնէ Տ. Յովհաննէս Գրիգորեանի Փոխանցումի նպաստ Ընկերութեան	10000	10000
6		Նոյն		
11	2	Փոխանակագիր Տ. Յովհաննէս Գրիգորեանի իր բաժնեվճարը, ցուցակ 1	11346 50	11346 50
7		Նոյն		
9	2	Սնտուկ Տ. Յովհաննէս Գրիգորեանի իր վճարումը	3653	3653
8		Նոյն		
20	9	Քրէտի Լիօնէ Սնտուկին Մեր վճարումը, արժէք 2 Հոկտ.	8500	8500
9		2		
6	20	Ընդհանուր Ծախք Քրէտի Լիօնէին Արժէք 2էքի տեարակի մը	20	20
10		3		
30	14	Խաչատուր Առկասեան Ընդհանուր Ապրանքին Մեր վճարումը, արժէք 90 օր	2431	2431
11		Նոյն		
30	19	Խաչատուր Առկասեան Ապրանք վրայ Ծախքի Պատաստում	25 50	25 50

Messieurs ,

Quelques rentrées considérables sur lesquelles j'avais compté m'ayant fait défaut, je crains de ne pas être en état de solder, avant la fin du mois votre facture de 2500 frs. échue le 15 courant. Je vous envoie cependant un acompte de 1000 frs. sur Martin et Jacques de votre ville, que vous aurez la bonté de passer à mon crédit en me faisant parvenir un reçu. Vous pouvez compter que le reste vous sera ponctuellement remis avec les intérêts avant le commencement du mois prochain.

Veillez, Messieurs, accepter mes remerciements d'avance avec mes sincères salutations.

Gentlemen ,

Some large payments on which I had relied not having come in, I fear it will not be in my power to pay the account of my bill amounting to 2500 francs and due on the 15th inst. before the end of this month. I, however, remit on account a bill for 1000 francs, on Martin and Jacques of your place, which please to place to my account, and advise me of the receipt. The remainder, you may be assured, shall be punctually paid with interest before the commencement of next month.

Please accept my best thanks in anticipation and believe me, Gentlemen, to remain
Yours sincerely

Մ Ե Տ Ա Ք Ս Ը Լ Ի Ի Օ Ն Ի Մ Է Չ

Մեսսիսի Ընկերութիւնք, որ կազմուած է ի Լիօն, մասնաւոր առանձնաշնորհում ունի որոշեալ ժամանակի մը համար գրաւոր կերպով երաշխաւորել իրեն աւանդ տրուած մետաքսին արժէքը: Պակն քր Ֆրանսը արտօնուած է ճիշտ առեւտրական թուղթերու պէս զեղչել այս երաշխաւորագրերը: Մետաքսի վաճառականութեան մէջ պանքաներուն միջամտութիւնը միեւնոյն նկարագիրը չունի Եւրոպական կամ Ասիական մետաքսներուն համար: Եթէ խնդիրը Եւրոպական մետաքսի վրայ է [Ֆրանսա, Իտալիա, Սպանիա], պանքաներուն դերը կը կայանայ խոզակի ատեն մանարանի տէրերուն եւ մետաքսի վաճառականներուն կանխավճար ընելու մէջ: Կանխավճար կ'ընեն նաեւ իրենց յատուկ մթերանոցներուն մէջ աւանդ դրուած մետաքսներուն վրայ: Վերջապէս կը զեղչեն մետաքսի վաճառականներուն փոխանկագրերը: Եւրոպայի մէջ ծախուած Չինու եւ Ճարնի մետաքսներուն գալով, ծախողներուն կողմէ քաջուած փոխանկագրերն ընդհանրապէս երկար պայմանաժամերով կ'ըլլան, այսինքն տեսօրէն 4 կամ 6 ամիս ետքը վճարելի: Այս փոխանկագրերուն կը կցուին ապրանքին բեռնագիրը (ֆոնկարման) եւ ապահովագրութեան մուրհակը, որով ապրանքը փոխանկագրին տիրոջ տրամագրութեան տակ կը մնայ: Այս վերջինն իրաւունք ունի վար դնելու դանոնք մինչեւ փոխանկագրին վճարումը: Եւրոպական պանքաներ, որք Մ. Ասիոյ մէջ մասնաճիւղ ունին եւ փոխադարձաբար, կը գընեն այս փոխանկագրերը: Ծովային ապահովագրութիւնն էական մաս կը կազմէ մետաքսի վաճառականութեան: Նախագգուշութիւն մ'է զոր վաճառականը շատ քիչ անգամ դանց կ'ընէ, մինչեւ իսկ իրեն համար պարտաւորիչ է երբ կ'ուզէ կանխավճար ստանալ իր ապրանքին վրայ: Չինաստանի պանքանք, որ Եւրոպական տուներու վրայ քաջուած թուղթերը կ'առնէ, կը պահանջէ որ ապրանքն ապահովագրուի, վասն զի եթէ նաւը, որուն մէջ կը գտնուի երաշխաւորու-

թիւն մը կազմող ապրանքը, ընկղմի, պանքէտը կրնայ իր տուած կանխավճարը վտանգել: Ապրանքին փնաս մը պատահած ատեն, քննութիւնը կը կատարուի մէկ կամ երկու միջնորդներու ձեռքով: Եթէ փնասը 1 կամ 2% ին մէջն է, փնաս չի համարուիր, հակառակ պարագային մէջ ընկերութիւնն ամբողջ փնասը կը վճարէ եւ փնասուած ապրանքն իր հաշուոյն աճուրդով կը ծախէ: Ընդհանրապէս ապրանքը հաշուեցոյցին գումարէն 10% աւելիի կ'ապահովագրեն: Ապահովագրութիւնը կը կատարուի մեկնումի կամ ժամանումի նաւահանգստին մէջ, բայց միշտ շոգենաւին մեկնելէն առաջ: Լիօնի մէջ, մետաքսի վաճառականն յաճախ պանքէտի դեր կը կատարէ: Խոզակներու գնման ատեն կանխավճար կ'ընէ Ֆրանսացի, սպանիացի կամ իտալացի շերամաբոյժին կամ անոր ներկայացուցիչին: Շերամաբոյժն ետքը իր մետաքսները կը ղրկէ փոխատու վաճառականին որպէս զի իրեն հաշուոյն ծախէ: Երբեմն շերամաբոյժը հարուստ կ'ըլլայ, դրամի պէտք չունենար և մետաքսը ղրկած ժամանակ միայն ստակ կ'առնէ: Երկու պարագային ալ, վճարումներն երեք ամսուան թուղթերով կ'ըլլան: Վաճառականն իրեն ղրկուած մետաքսը կը ծախէ եւ վաճառման հաշիւը կը ղրկէ շերամաբոյժին: Վճարման մասին պատասխանատու է եւ ընդհանրապէս 2 - 2½% յանձարարողչէք կ'առնէ: Երբեմն կը պատահի նաեւ որ շերամաբոյժը կէս առ կէս ընկեր կ'ըլլայ վաճառականին կամ շահադէտին հետ: Լիօնի մէջ մետաքսի վաճառականներ կան որ իրենք մանրաբաններ կը բանեցնեն Ֆրանսայի մէջ կամ օտար երկիր: Մետաքսի վաճառականը կը գնէ նաեւ բոթական մետաքսը, մինչ առաջ պարզ միջնորդ մ'էր, շերամաբոյժէն կ'առնէր ու գործարանատէրին կը ծախէր, նոր յանձնարարողչէք մը ստանալով: Խոզակի ատեն, աւելի կամ նուազ կարեւոր սակարկութիւններ կ'ըլլան ալիվոն (յանձնելի), մետաքսի վաճառականներու եւ գործարանատէրներու կողմէ, իրենց պէտք եղած ապրանքը կանխաւ ապահովելու համար: Գալով վաճառումներուն, քանի մը եղանակներ կան: Մետաքսի վաճառականը շատ անգամ ինք ուղղակի գործարանատէրին կը

ծախէ: Երբեմն ալ գործառնութիւնք միջնորդի ձեռքով կ'ըլլան: Մետաքսի միջնորդը սովորաբար թէ՛ ծախողին թէ՛ գնողին շահերը կը պաշտպանէ: Անկողմնակալ դատաւորի մը տեղ կը դնեն զայն, եւ իրաւ շատ անգամ ալ պայմանադիրներուն միջեւ համաձայնութիւն կը գոյացնէ: Միջնորդներու արհեստապետութիւնն 1866ին ջնջուեցաւ, Այսու հանդերձ, այն միջնորդներ որք տարեկան 3000 Փրանքի տուրք մը վճարելով իրենց անունն արձանագրել կուտան, ինչ ինչ առանձնաշնորհումներ կը վայելեն, զոր օրինակ, մետաքսի հրապարակային վաճառումներուն ներկայ գտնուելու կը հըրաւիրուին, եւ իրաւունք ունին անդամ ըլլալու այն յանձնաժողովին որ մետաքսի պաշտօնական գինը կը ճշտէ: Այսօր ընդհանրապէս միջնորդին դերը շատ սահմանափակուած է Լիօնի մէջ, սպառման այդ կարեւոր հրապարակին վրայ ուր գործարանատէրն ուղղակի ինք կը դիմէ վաճառականին, միջնորդչէքը շահելու համար: Վաճառման պայմանաժամն է 90/100 օր: Գործառնութեանց թիւը մետաքսի գինին հետ փոփոխութիւն կը կրէ: Միջին հաշուով տարին 300 միլիոն Փրանքի գործառնութիւն կ'ըլլայ: Մետաքսի վաճառականք 1872էն ի վեր սկսեցին մը կազմած են « Union des marchands de soie de Lyon » անունով, որ կը ծառայէ իբր միութեան կեդրոն, ուր կ'ուսումնասիրուին մետաքսի վաճառականութեան վերաբերեալ ամէն ընդհանուր եւ մասնաւոր խնդիրներ: Առեւտրական դատարանը շատ անգամ անոր ձեռնհասութեան կը դիմէ ծագած վէճերու կարգադրութեան համար: Սէնտիքան, որու կ'անդամակցին Լիօն գտնուող մետաքսի գրէթէ բոլոր վաճառականք, իր հաստատութենէն ի վեր ամէն տարի կը պատրաստէ ամբողջ աշխարհի մետաքսի արտադրութեան վիճակացոյցը: Այս վիճակացոյց, որ մեծ խնամքով կը պատրաստուի, անժխտելի հեղինակութիւն մը կը վայելէ:

Ահա մէկ ամիոփումը մետաքսի վաճառականութեան ի Ֆրանսա, 1900 ին:

	Ներածում	Արժանում
	քիւ	քիւ
Գերմանիա	36,900
Անգլիա	139,400
Պելժիա	5,700
Չին	4,976,100
Սպանիա	174,000
Իտալիա	882,100	2,310,900
Ճաբոն	1,330,700
Չուիցերիա	827,800
Թուրքիա	819,600
Ուրիշ երկիրներ	304,100	256,500
	8,312,600	3,751,200

Սնանկութեան վճռին մէջ ուրիշ տրամադրութիւն մ'ալ կայ, որ հետզհետէ ջնջուելու վրայ է — այսինքն սնանկը բանտարկելու կամ ոստիկանական հսկողութեան ենթարկելու տրամադրութիւնը: Այն սնանկը, որ օրինական պայմանաժամին մէջ դատարանին ներկայացուցած է իր հաշուեկշիռը, կրնայ ազատ մնալ այս բանտարկութենէն, զոր, բաց աստի, դատարանն իրաւունք ունի առկախ ձգելու: Բայց այն պարագային իսկ, երբ դատարանը յայտնապէս բանտարկութեան վճիռ տուած է — վասն զի օրէնքը չարտօներ զինք ազատ թողուլ սնանկը — յաճախ այդ վճիռն անգործադրելի կը մնայ իրականութեան մէջ: Սինսիին ազատ կը թողու պարտականն և Ընդհանուր Դատախազն է միայն որ ձերբակալել կուտայ զայն, եթէ խարդախութեան կասկած մը ունենայ: — Ըսինք թէ հաշուեյարդարութեան վճռին հետեւանքով, պարտականը կը կորսնցնէ առեւտրական գործառնութիւններ ընելու իրաւունքը: Աւելցնենք թէ այդ վճռէն առաջ կատարուած գործողութիւններն ալ կրնան անվաւեր նկատուիլ: Օրէնքը հաստատած է կասկածելի ըսուած շրջան մը, որ միեւնոյն տեւողութիւնը չունենար ամէն սնանկութեանց մէջ: Առեւտրական դատարանը, սնանկութեան վճռին և կամ ետքէն

տրուած վճռի մը մէջ կ'որոշէ վճարմանց դադարման թուականը: Եթէ այս թուական չի ճշտուի, վճարմանց դադարման օրը կը շփոթուի սնանկութեան վճռին հրատարակուած օրուան հետ: Չանազան երկիրներու օրէնքները պայմանաժամ մը կ'որոշեն: Պելժիոյ և Գերմանիոյ մէջ այս պայմանաժամ 6 ամիս է, Իսպիոյ մէջ երեք տարի, իսկ Ֆրանսայի մէջ ո՛րքան ատեն որ յարմար տեսնուի: Վճարմանց դադարման թուականը ճշտող վճիռը կը հրատարակուի սնանկութեան վճռին պէս և նոյն եղանակով: Օրէնքը, այս տեսակ շրջան մը կազմակերպելով, նպատակ ունի միջոց տալ սինսիին, որ պարտականին կողմէ նոյն շրջանին մէջ կատարուած գործողութիւնները անվաւեր հռչակել տալով, մասային վերադարձնէ գոյքէն զատուած մաս մը, եւ այս կերպով աւելցնէ պահանջատէրներու առնելիք բաժինը: Օրէնքին այս տրամադրութեան մէջ կը տիրէ սա սկզբունքը թէ իր վճարումներուն դադարումէն ետք վաճառականին կատարած գործողութիւնք և մինչեւ իսկ իր պահանջատէրերէն ոմանց ըրած անհատական վճարումները մասային իրաւունքը պէտք է ըլլան եթէ կարելի ըլլայ ապացուցանել թէ դրամ առնող պահանջատէրը գիտէր ապագայ սնանկին վճարմանց դադարումը:

Առեւտրական դատարանը, որ սնանկութենէն ծագում առած բոլոր խնդիրներուն մէջ վճիռ կուտայ, գնահատումի իրաւունք ունի եւ կրնայ սինսիին եզրակացութիւններուն հակառակ, անվաւեր չնկատել ու եւ է գործողութիւն եթէ օրինաւոր գտնէ զայն, մինչեւ իսկ երբ դատավարութեան միջոցին հաստատուի թէ այդ պահանջատէրը գիտէր որ պարտականն իր վճարումները դադարեցուցած է: Բացառութիւն ըլլալով կան կարգ մը գործողութիւններ որոց անմիջական ջնջումը կը հրամայէ օրէնքը, նոյն իսկ եթէ այդ երրորդ անձը տեղեկութիւն ունեցած չըլլայ վճարմանց դադարումէն: Այդ երրորդը կը դատապարտուի ո՛չ միայն եթէ իր կատարած առեւտրական մէկ գործողութիւնը վճարմանց դադարման թուականէն ետքը տեղի ունեցած է, այլ նոյն իսկ եթէ կատարուած է այդ թուականէն առջի 10

օրերուն մէջ: Այս բացառիկ գործողութիւններն են վաճառականին ըրած նուէրներ(1), իր մէկ պարտքին՝ պայմանաժամէն առաջ հնչուն դրամով կամ պայմանաժամին՝ հնչուն դրամէ զատ ուրիշ ձեւով ըրած վճարումները, պայմանադրական գրուները, եւ վերջապէս ապահովութիւնները զոր տուած է պարտապահանջի մը յառաջագոյն կնքուած պարտքերու համար: Ըսել է թէ վաճառականը, իր վճարումներու դադարման պահուն եւ մինչեւ իսկ անկէ 10 օր առաջ պարտաւոր չէ ապահովութիւն տալ պահանջատէրի մը կամ եթէ տուած է չեղեալ կը նկատուի եւ պահանջատէրը բաժին մը միայն կ'առնէ միւսներուն պէս: Պարտապահանջ մը նպատաւորելու կամ նուէր մը ընելու նպատակն ունեցող գործողութիւններու դէմ օրէնքն այսքան խիստ վարուելով հանդերձ, ընդհակառակը ներողամիտ աչքով կը դիտէ նոյն կասկածելի երջանին մէջ կատարուած գործողութիւն մը, զոր չուզեր անվաւեր նկատել: Պարտականին ստորագրութիւնը կրող փոխանակագրի մը կամ ի հրամանի մուրհակի մը տէրը ազատ է մասային չյանձնելու այդ թուղթին փոխարժէքը թէև վճարմանց դադարումէն ետք և այդ դադարումը գիտնալով հանդերձ առած ըլլայ զայն:

Այդ գումարը գանձած է փոխանակագրին կամ ի հրամանի մուրհակին պայմանաժամուն, վասն զի չէր կրնար չներկայացնել և դրամը տուած ըլլալով չէր կրնար մերժել: Այս պարագային, մասան կրնայ դատ բանալ սնանկին թղթակցին դէմ — որ այդ թուղթը շրջաբերութեան հանած է —, եթէ հաստատուի որ անիկայ գիտէր քաշողին կամ ստորագրողին վճարմանց դադարումը: Ասիկայ այնքան արդարացի տրամադրութիւն մ'է որ եւրոպական բոլոր օրէնսդրութիւնք ընդունած են:

(1) Իր զաւկըներէն միոյն կամ ուրիշի մը համար տրուած օժիտը բացառութիւն է:

[Handwritten notes and signatures in Armenian script, including names like 'Արմենացի' and 'Բարեկարգ'.]

Գ Ի Ե Ք. Հ Ա Տ Ո Ր Ի

12 Ղրուց

Գաւառաց հաւնար՝ իբր բոսսի ծախս՝ 3 դրուշ աւելի

ԿԱՆԵԻԿԻ ՀԱՄԱՐ 15 % ԶԵՂԶ

Հասցէ. — ՄԻՄՕՆ ՁԷՕՄԼԷՔՁԵԱՆ
Ի հմբագրատուն «Բիւզանդիոն» Հայաբերքի
Պապը Ալի հասսէսի թիւ 23—25 Կ. Պոլիս
Կամ

ԻԶՄԻՏ ՕՐԻԷԼ, ԹԻԻ 21

Կ. Պոլիս, Էսկի Զապրիէ հասսէսի

12 Ղրուշ

Հանրագիտակի Դ. Թիւը հրատարակուեցաւ պատկերազարդ նշան

Կ. Պէրպլերեան տպարանէն ճոխ պարունակութեամբ:

Շատ հայրեր՝ իրենց տղոց ձեռքը տալիք գիրք մը, հանդէս մը կը փնտռեն, արդեօք չափազանցութիւն կ'ըլլայ եթէ բռնք որ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ, մէկ հատիկը կրնայ հանդիսանալ ընտանիքներու մէջ թափանցող և դպրոցականներու յատուկ է:

Տարեկան բաժնեգինն է Պոլսոյ համար 40, վեցամսեայ՝ 20, եռամսեայ՝ 10 դհկ: Հատը 40 փարայ:

Գաւառները՝ տարեկան 45, վեցամսեայ՝ 25, եռամսեայ՝ 12½ դհկ: Հատը 50 փարայ:

Հասցէ՝ — ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ,

Կ. Պոլիս, Էսկի Զապրիէ ճատաէսի, Թիւ 61:

ՄԼՆԷԼԼԷ կամ ՕՍՄ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ՕՐԻՆԱԳԻՐՔ, հինգ հատոր, անդեղջ 20 դրշ. — Կիսակաշի գեղակազմ 25 դրշ: — Կեդրոնատեղի, Զաքմաքճըլար, աղբիւրին կարգը, կազմարար Արշակ Մանուկեանի կազմատունը

معارف نظارت جليله سنك ۳۰۳ نومرولى و في ۱۶ تشرين اول

سنه ۱۳۱۶ تاريخلو رخصتنامه سيله طبع اولمشدر

«Ազգային գրադարան»



NL0083828

